

համակրութիւնը վառ կը պահէին իրենց հետ (նոյն, 52, 88): Ազնուականաց ներքին բարեկամութեան կապն էր ճաշը (նոյն, 174), ինչպէս նաեւ ամէն մեծատանց. Նիւսացւոյն հայ մեկնչին ըսածին պէս՝ թէ «Սովոր են մարդիկ որ կարգաւ զմիմեանս պատուեն իւրաքանչիւր յընչից իւրոց» (Լծ. Հյր. ԺԴ):

Ասով կը վերջանային միշտ ազատաց որսորդութիւնք ալ (Փրպ. 26-7. Խոր. 209): Յարգելի հիւրերն ասով կը մեծարուէին (Փաւս. 114), եւ կամ որսով ու ճաշով հանդերձ (նոյն, 51. Խոր. 249): Սոյնպէս կը պատուէին հայրապետը՝ երբ հովուական այցելութեան կ'երթար տեղ մը (Հյպտ. 195): Անրաժան էր այն հասարակաց հոգեւոր ուրախութեան առիթներէ եւս, ինչպէս էր նորակառոյց եկեղեցեաց նաւակատիքը (Կիր. 147): Նոյն ինքն գլխաւոր մասը կը կազմէր ընտանեկան ներքին հանդիսից ալ, որ կը լինէին ծննդեան եւ անուանակոչութեան, նկրտութեան, հարսանեաց եւ այլ առիթմերով, զորս առանձին պիտի տեսնենք: Ծաշ կը տրուէր նաեւ քրիստոնէական բարեգործութեան եւ հոգւոց հանգստեան համար, զորս նոյնպէս պիտի տեսնենք իրենց կարգին: Քաղաքական մեծամեծ դաւերն